

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/4

4 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Հիդրոշինարար-5» ԲԲԸ 20.08.2012թ. բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 09.07.2012թ. թիվ 1001884 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.05.2012թ. թիվ 1001884 հանձնարարագրի «Հիդրոշինարար-5» ԲԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 09.07.2012թ-ին կազմվել է թիվ 1001884 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ): Ստուգման ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 99.468.879 դրամ, այդ թվում՝ շահութահարկի գծով ընդամենը 65.813.081 դրամ, եկամտահարկի գծով՝ 11.938.212 դրամ, ավելացված արժեքի հարկի գծով՝ 17.503.180 դրամ և դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար՝ 4.214.406 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը, ըստ էության, կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքով սահմանված տուգանքները նշանակվում են հարկային մարմինների ղեկավարների որոշմամբ»:

Քննարկվող դեպքում դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար համապատասխան որոշմամբ տուգանք նշանակվելուց բացի, նշված տուգանքն արձանագրվել և գանձման է առաջադրվել նաև ստուգման ակտով:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտով պետք է ընդամենը արձանագրվեր դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու փաստը, իսկ այդ խախտման համար տուգանքի գումարը, որը տվյալ դեպքում կազմում է 4.214.406 դրամ, պետք է նշանակվեր (գանձման առաջադրվեր) հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ու մ է՝

«Հիդրոշինարար-5» ԲԲԸ 20.08.2012թ-ի բողոքով բերված պահանջը՝ ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու վերաբերյալ բավարարել

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ